Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ Ուսուցչի մասնակցությունը հաստատության մեթոդմիավորումների աշխատանքին

Վերապատրաստող, մենթոր՝ Սեդրակյան Մարիամ

Ուսուցիչ՝ Պետրոսյան Դոնարա

Ներքին Գետաշեն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

1.1 Մեթոդմիավորումը դպրոցում.....5

1.2 2022-2023 ուսումնական տարվա խնդիրները.....12

1.3 Ուսուցչի ներգրավածությունը հաստատության մասնագիտական մեթոդմիավորումների գործընթացին:.....13

Եզրակացություն.....16

Առաջարկություններ.....17

Օգտագործված գրականության ցանկ

.....18

Ներածություն

Կրթական բարեփոխումների հիմքում ընկած է նոր ժամանակի հրամայականներին համապատասխանող որակի կրթություն ունենալու անհրաժեշտությունը: Այս գործընթացն իրենից ենթադրում է ուսումնական գործընթացի բոլոր ասպեկտներում իրականացնել շարունակական բարեփոխումներ ու արդիականացում՝ այդ թվում ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացում, զինում ժամանակակից մանկավարժամեթոդական հնարներով, անդադար ինքնակրթման ու ինքնազարգացման գործընթաց:

Այստեղ ուսուցիչը չի կարող սահմանափակվել ինքնուրույն գործունեությամբ. ինքնակրթության, ինքնազարգացման գործընթացներին գալիսէ փոխլրացնելու աշխատանքային համագործակցությունը այլ մանկավարժական աշխատողների հետ՝ նպատակ ունենալով ամբողջացնել ողջ մանկավարժական ներուժը:

Առհասարակ, ցանկացած բնագավառում խրախուսվում է կոլեկտիվ աշխատանքը: Ժողովրդական իմաստությունն ասում է՝ «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես»: Սա կարելի է դիտարկել որպես նախաձեռնության կարգախոս, որը կենսունակ է ոչ միայն ուսուցիչների համագործակցության, այլ նաև կրթական համագարգի այլ շահառուների համագործակցության պարագայում, օրինակ՝ սովորող-ուսուցիչ, ծնող-դպրոց: Ասվածից կարող ենք եզրահանգել, որ ցանկացած միջավայրում փոխօգնությունը, համագործակցությունը, օրինակելի փորձի փոխանակումը, այդ փորձի հիման վրա սեփական ֆայլերի մշակումը այն սկզբունքներն են, որոնց հիման վրա կարելի է կառուցել արդյունավետ գործունեություն:

Մեթոդական միավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող, համակարգող գլխավոր օղակն է: Մեթոդական աշխատանքը դպրոցում մի մանկավարժական համակարգ է, որի հիմնական գործառույթը լավագույն փորձի փոխանակման, մեթոդամանկավարժական և ուսումնադաստիարակչական հարցերի, արտադասարանական միջոցառումների կազմակերպման և այլ ուսումնականհարցերի քննարկման մեջ է կայանում: Կարող ենք ասել, որ մեթոդական միավորումների գործունեությունը միտված է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ

կազմակերպմանը՝ հիմք ընդունելով կրթության որակի բարելավման անհրաժեշտությունը:

Մեթոդական միավորումների անդամներեն ուսումնական հաստատության ուսուցիչներն են, ովքեր իրենց աշխատանքն ուղղում են դեպի դպրոցի ու սովորողների շահերը: Աշխատանքն այստեղ ուղղված է ուսուցիչների մասնագիտական որակների, մեթոդական գիտելիքների բարձրացմանը: Միավորման ներսում շատ կարևոր է յուրաքանչյուր ուսուցչի անհատական դերկատարումը:

Նոր աշխարհի առաջընթացի անհնախադեպ աճը, բարձր տեխնոլոգիաների ներդրումն էապես դիպչում է նաև կրթական համակարգին: Կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով բարեփոխում ու արդիականացվում է, ընդ որում՝ ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական

գիտելիքներով, սովորողները նույնպես շատ հաճախ կարողանում են կառավարել տեղեկատվական հոսքերը: Արդյունքում ստացվում է, որ ուսուցչի համար ևս անսպասելի խնդիրներ են ծագում: Նա պետք է հասցնի քայլել ժամանակի հետհամընթաց, որպեսզի շարունակի կատարել կրթելու ու դաստիարակելու իր գործառույթը:

Այսպիսով, մեթոդական միավորումներում կոլեկտիվ աշխատանքը ուսուցչի համար այն հարթակն է, ուր նա կարող է սովորել, սովորեցնել, ուսումնասիրել, հետազոտել՝ բարձրացնելով իր մասնագիտական որակները:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունն է ուսումնասիրել գոյություն ունեցող բոլոր մեթոդները,առանձնացնել և կիրառել ամեն մի թեմային համապատասխան մեթոդը: Այդ գործում մեծ ներդրում ունի նաև դպրոցի մեթոդմիավորման կազմակերպությունը:

Հետազոտության նպատակը: Առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել հաստատության մեթոդմիավորումների աշխատանքին:

Հետազոտության խնդիրը: Սահմանել մեթոդական միավորման կառուցվածքն ու հիմնական գործառույթները դպրոցում՝ կարևորելով մեթոդական միավորումներ կազմելու անհրաժեշտությունը և դրանցում ներգրավված ուսուցիչների հնարավոր ձեռքբերումները:

1.1 Մեթոդմիավորումը դպրոցում

Ուսուցիչների մեթոդական աշխատանքը կազմակերպող գլխավոր կառույցը առարկայական մեթոդմիավորումն է: Այն նպաստում է ուսուցիչների մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը:

Առարկայական մեթոդմիավորումների մեթոդական աշխատանքը կարող է ունենալ կազմակերպման հետևյալ ձևերը.

-դասախոսություն,

- սեմինար,

-գործնական սեմինար,

- ստեղծագործական բանավեճ,

- հյուրասրահ,

- կոլեկտիվ ստեղծագործ աշխատանքի ժամ,

- գործնական խաղեր,

- իրավիճակային ուսուցում,

- դերային խաղեր

- մեթոդական մրցույթներ,

- մեթոդական գաղափարների տոնավաճառ,

- մեթոդական վարպետության դասեր,

- բանավեճեր,

- որոնողա-ստեղծագործական աշխատանքներ, նախագծեր, - հանդիպում <<կլոր սեղանների>> շուրջ:

Կարող են կազմակերպվել նաև գործնական աշխատանքներ, բաց դասեր, ըստ առարկաների արտադասարանական միջոցառումներ, առարկայական շաբաթներ, <<Տարվա ուսուցիչ>>

մրցույթներ, գիտագործնական համաժողովներ, մեթոդական փառատոներ և այլ մեթոդական միջոցառումներ:

Աշխատանքի ընթացքում կարող են անցկացվել առարկայական մեթոդմիավորումների միավորված նիստեր: Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքների շրջանակում հետաքրքրություն են ներկայացնում նաև ուսուցիչներին տրվող տնային աշխատանքները:

Դրանք կարող են լինել՝

- դասի մոդելավորում (հատվածաբար կամ ամբողջական),
- տրված թեմայով դասերի մշակումներ,
- որոշակի թեմայով հետազոտություններ կատարելու ծրագրերի մշակում,
- ըստ որոշակի թեմայի, պրոբլեմի գրականության ընտրություն,
- ստուգիչ նյութերի, թեստերի կազմում,
- հուշագրերի, դիդակտիկ նյութերի կազմում, պատրաստում,
- առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում,
- այցելություններ դասերի, արտադասարանական միջոցառումների՝ վերլուծություններով,
- տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում,
- աշխատանք՝ ինքնակրթության համար ընտրված թեմայի շուրջ,
- որոշակի պրոբլեմի շուրջ զեկուցման նախապատրաստում,
- ուսումնասիրած թեմայի, խնդրի շուրջ շնորհանդեսի նախապատրաստում,
- սեփական հետազոտությունների շրջանակում ձեռքբերումների ներկայացում,

- որոշակի թեմայով կամ միասնական մեթոդական թեմայով ստեղծագործական հաշվետվություն:

Առարկայական մեթոդմիավորումների աշխատանքներում որոշակի կարևորություն է տրվում նաև ուսուցիչների ինքնակրթության կազմակերպմանը: Հոգեբանները գտել են, որ միայն այն գիտելիքներն են դառնում համոզմունք, որոնք մարդն ինքնուրույն է ձեռք բերում:

Եվ եթե գիտելիքների սկզբնական ընկալումը կայուն չէ, ապա հաջորդող աշխատանքը պետք է լինի անհատական և պետք է իրագործվի այն ծավալով ու տեմպով, որ անհրաժեշտ են յուրաքանչյուր անձի: Իսկ դա հնարավոր է միայն ինքնուրույն կրթական գործունեության պայմաններում: Առավել արդյունավետ ձևով այն կազմակերպել հնարավոր է մեթոդմիավորումների նիստերի ընթացքում՝ արդյունքները ներկայացնելով տարբեր ձևերով. զեկուցումներ, բաց դասեր, ստեղծագործական հաշվետվություններ: Այս բոլորը պլանավորվում է նախապես և վերահսկվում է մեթոդմիավորման ղեկավարի կողմից:

Ինչպե՞ս պետք է կազմակերպել մեթոդմիավորման աշխատանքը դպրոցում:

Աշխատանքային պլանում պետք է առանձնացնել հիմնական ուղղությունները, օրինակ՝ ուսուցման որակի բարձրացում, դաստիարակչական գործընթացի կատարելագործում՝ միտված երեխայի անձի զարգացմանը:

Մեթոդմիավորման աշխատանքն անհրաժեշտ է կառուցել ընդհանուր մանկավարժական խնդիրների շուրջ, որն այդ պահին ծառացել է դպրոցի առջև: Ընդհանուր թեմայի ճշնարիտման ընթացքում մեթոդմիավորման նիստերում ցանկալի է կոնկրետացնել այն: Թեմայի որոշումից հետո անհրաժեշտ է նշել դրա գործնական ելքի ձևը. ելույթներ սեմինարներում, բաց դասի ընթացքում աշխատանքի փորձի ներկայացում և այլն:

Մեթոդական աշխատանքի ժամանակակից մակարդակի ապահովման համար կրթական հաստատությունում կարևոր է կազմակերպել աշխատանք՝ ուսուցիչներին նորմատիվ փաստաթղթերի, մեթոդական և առարկայական նոր գրականության ծանոթացման ուղղությամբ:

Մեթոդմիավորման նիստերում կարելի է ուշադրություն հրավիրել այն հարցերին, որոնք կապված են հանձնարարականների, հուշագրերի, ծրագրի առավել բարդ թեմաների քայլաշարի կազմմանը, առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրմանն ու տարածմանը: Անհրաժեշտ է մանկավարժական փորձին վերաբերվել զգուշությամբ ու խնամքով և հաշվետվությունների, հոդվածների տեսքով դրանք տեղադրել մեթոդական <<գանձարկղում>>: Հնարավոր է կազմակերպել դասապլանների, ստեղծագործական աշխատանքների, զննական միջոցների, լավագույն տետրերի ցուցահանդեսներ: Մանկավարժական վարպետության կատարելագործման նպատակով մեթոդմիավորումը կազմում է դասերին փոխադարձ այցելությունների պլան-գրաֆիկ: Մեթոդմիավորման աշխատանքում մեծ նշանակություն ունի վարպետ ուսուցչի և սկսնակ մասնագետների միջև ծավալվող գործունեությունը:

Մեթոդմիավորման աշխատանքի պլանավորման ընթացքում երաշխավորվում է ներառել հետևյալ հարցերը.

- Առարկայի տեսական և դասավանդման մեթոդիկայի հարցեր, հարցեր մանկավարժությունից և հոգեբանությունից (մասնագետների ելույթներ):
- Ծրագրում ընդգրկված բարդություն ներկայացնող հարցերի ուսումնասիրում և այդ կապակցությամբ մեթոդամանկավարժական գրականության իրազեկում:
- Նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրում:
- Նոր դասագրքերի ուսումնասիրում:
- Երաշխավորությունների, հուշագրերի, զննական միջոցների մշակում:
- Միջառարկայական կապերի հարցեր:
- Տետրերի ստուգման հարցեր:
- Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և տարածման աշխատանք. սեմինարների կազմակերպում՝ գործնականության ապահովմամբ:
- Նպատակային փոխադարձ դասալսումներ, բաց դասեր:

- Ուսուցիչների դասավանդման որակի և սովորողների գիտելիքների մակարդակի ուսումնասիրում և արդյունքների ճնշարկում:
- Սկսնակ ուսուցիչների հետ աշխատանքի կազմակերպում:
- Քննական նյութի նախապատրաստում:
- Սեմինարներ, խորհրդակցություններ:
- Առարկայական գիտագործնական համաժողովներ:
- Ինքնակրթության վերաբերյալ ուսուցիչների հաշվետվություններ:
- Մեթոդական նյութերի և մշակումների համակարգման կազմակերպում. դասապլաններ, ցուցահանդեսներ, թեմատիկ մշակումներ, դիդակտիկ նյութեր, զննական միջոցներ, սովորողների ստեղծագործական աշխատանքներ և այլն:
- Առարկայական արտադասարանական աշխատանքներ:

Կրթական նոր պահանջներով պայմանավորված՝ դպրոցում մանկավարժական գործունեության իրականացնելու համար պարտադիր պայման է դառնում, որ ուսուցիչը համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով համալրելի իր մասնագիտական գործունեությունը: Այս գործընթացում հաջողությանհասնելու համար ուսուցչին օգնում է դպրոցում գործունեություն ծավալող մեթոդական միավորումները: Այստեղ շատ կարևոր է համագործակցությունը: Սկսնակ ուսուցչին պետք է սովորեցնել, թե ինչպես դասարանական կուռ կոլեկտիվ ստեղծել, ուսումնասիրել սովորողների անհատական առանձնահատկությունները, սկսնակին պետք է ուսուցանել ուսումնական ծրագրերը, դասագրքերը, ձեռնարկները, լրացուցիչ գրականությունը, սկզբնաղբյուրներն ուսումնասիրելու մեթոդիկան, թեմատիկ պլան, օրվա դասի պլան կազմելու տեխնիկան[1]:

- Ինչպես նշեցինք, հանրակրթական ուսումնական հաստատությունում մեթոդական աշխատանքի իրականացման ձևերից է մեթոդական միավորումների կազմակերպումը: Դրանք մոտ կամ հարակից առարկաներից կազմված առարկայական մասնախմբեր են, որոնք իրականացնում են հատուկ կանոնակարգված գործունեություն: Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ

կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Կարող են ձևավորվել նաև այլ խորհրդակցական (հոգաբարձուների, շրջանավարտների) մարմիններ:

• Մեթոդմիավորումների կազմման հարցում որոշում կայացնողը դպրոցի մանկավարժական խորհուրդն է: Մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի անվանական կազմը գրանցվում է մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյանում:

• Ստացվում է, որ խորհրդի նիստում խորհրդակցական մարմնի անդամներըքննարկում են մեթոդական միավորումների կազմման հարցն ու անհրաժեշտության դեպքում ընդունում այն: Աշակերտները

• պայմանավորված՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ձևավորվում են առարկայական մեթոդական միավորումներ մոտ կամ հարակից առարկաներից: Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից: Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:

• Այսպիսով առարկայական մեթոդական միավորումը ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրն է, որն իրականացնում է ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում:

• Մեթոդական միավորումների թիվը որոշվում է՝ ելնելով ուսումնական հաստատության կողմից հանձնարարված խնդիրների համալիր լուծման անհրաժեշտությունից և հաստատվում դպրոցի տնօրենի հրամանով: Մեթոդական միավորումները ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են դպրոցի տնօրենի կողմից՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի առաջարկությամբ: Մեթոդական միավորումները անմիջականորեն ենթակա են ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենին: Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնական գծով տնօրենի տեղակալի պաշտոնային պարտականություններից է՝ ղեկավարել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները,ընդհանրացնել և տարածել մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, աջակցել ուսուցման նոր մեթոդների ներդրմանը, ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:

• Մեթոդական միավորումների գործունեության հիմքում սովորողի իրավունքներն ու շահերն են, այն առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, կառավարության որոշումներով՝ հաշվի առնելով կրթական մարմինների բոլոր մակարդակների սովորողների շահերն ու իրավունքները: Այս մարմնի գործունեության հիմքում ընկած է սովորողների կրթությունն ու դաստիարակությունը, ինչպես նաև դպրոցի կանոնադրությունը, օրենքով սահմանված կարգով տնօրենի հրամաններն ու ցուցումները: Այնուամենայնիվ , իրողություն է, որ աշխատանքային գործունեության ընթացքում բացառված չեն մանկավարժական զանազան խնդիրները: Մանկավարժական իրավիճակների զգալի մասը խնդրահարույց է: Մանկավարժական խնդրի առաջ ենք կանգնում այն ժամանակ, երբ խնդրահարույց մանկավարժական իրավիճակը կարող է ունենալ լուծման մի քանի եղանակներ և անհրաժեշտ է գտնել այն եղանակը, որը տվյալ պարագայում կհանգեցնի խնդրի արդյունավետ լուծմանը:

• Մանկավարժական խնդիրների առկայության դեպքում չի կարելի անմիջապես անցնել խնդրի

լուծմանը. այն երկարատև և մի քանի փուլերից բաղկացած գործընթաց է: Առաջին հերթին անհրաժեշտ է վերլուծել բոլոր տվյալները: Մանկավարժական խնդրի լուծման առաջնային և կարևոր քայլը իրավիճակի վերլուծությունն ու խնդրի գիտակցումն է, թե որն է իրավիճակի առաջացման պատճառը, երբ ու ինչ պայմաններում է այն տեղի ունեցել, ինչպիսի բնութագիր ու փոխհարաբերություններ ունեն իրավիճակի հետ առնչություն ունեցող սովորողներն ու մանկավարժները, և այս ամենը ինչպիսի խնդրի առաջ է կանգնեցնում:Այս քայլը անտեսելու դեպքում անհնար է լիովին ուսումնասիրել ստեղծված խնդրահարույց իրավիճակը և հարցին ճիշտ լուծում տալ: Մանկավարժական խնդրի լուծման հաջորդ փուլը լուծման եղանակի ընտրությունն է, երբ մանկավարժը իր գիտելիքների պաշարից ու իր մանկավարժական փորձից ընտրում է տվյալ խնդրին համապատասխան

լուծման եղանակը՝ ընդունված որոշումը վերլուծելով ու գնահատելով: Խնդրի լուծման եղանակի ընտրության համար մանկավարժը կարող է նախ զրուցել տվյալ աշակերտի, անհրաժեշտության դեպքում նրա ծնողների հետ խորհրդակցել տվյալ երեխայի հետ աշխատող կամ էլ ավելի մեծ փորձ ունեցող այլ մանկավարժների հետ:

1.2 2022-2023 ուսումնական տարվա խնդիրները

2022-2023 ուստարում բնագիտամաթեմատիկական հանձնախումբը առաջնորդվելու է հանրակրթական հիմնական ծրագրով, որը ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի և դրանց համապատասխան ուսուցման կազմակերպման ձևերի, միջոցների ու մեթոդների ամբողջություն է, որն էլ ապահովում է հանրակրթության պետական չափորոշիչովսահմանված՝ շրջանավարտներին ներկայացվող նվազագույն որակական պահանջները: Ամփոփելով նախորդ ուստարվա արդյունքները՝ բնագիտամաթեմատիկական հանձնախմբի անդամները քաջ գիտակցում են իրենց առջև դրված խնդիրները:

Հանձնախմբում ընդգրկված են մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, բնագիտական առարկաների, ՆԶՊ-ի, ֆիզկուլտուրայի, կերպարվեստի, տեխնոլոգիայի ուսուցիչներ: Այդ իսկ պատճառով աշխատանքները կլինեն տարաբնույթ:

Մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է գիտակցել իր պարտականությունները դասավանդած առարկայի ուսուցման որակը բարձր պահելու, մատաղ սերնդի հոգում հայրենասիրություն և ազգային արժանապատվության բարձր զգացում դաստիարակելու, ազգային ոգու և ավանդույթների պահպանման և դրանք հաջորդ սերունդներին փոխանցելու, պարտքի զգացում ձևավորելու գործում:

Բնագիտամաթեմատիկական առարկաների ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է լուծել բազմապիսի խնդիրներ, քանի որ այսօրվա դպրոցի ավանդական գործելակերպով չի կարելի աշակերտներին տալ գիտելիքների այն անհրաժեշտ նվազագույնը,որը նախատեսված է ուսումնական ծրագրով: Յուրաքանչյուր դասի հաջողությանը նպաստում է ոչ միայն ուսուցչի հմտությունների և կարողությունների օգտագործումը, այլ նաև ուսուցման արդի պահանջներին համապատասխան մեթոդների կիրառումը: Ուսուցիչը պետք է անի ամեն ինչ, որպեսզի յուրաքանչյուր դաս աշակերտի համար դառնա ըմբռնելի, մատչելի, ուսուցանող և հետաքրքիր: Կարևորագույն խնդիրն է նաև աշակերտին գրքին կապելը, ինքնուրույն մտածելու, դատողություններ և եզրահանգումներ անելու հմտությունների մշակումը: Ուսումնական գործընթացի կարևոր օղակներից են նաև արտադասարանական միջոցառումներն ու էքսկուրսիաները, այցելությունները համապատասխան թանգարաններ:

Մ/մ գլխավոր խնդիրներից է դասավանդումը բարձրացնել որակական նոր աստիճանի, բարձրացնել դասավանդման պրակտիկ ուղղությունը և յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, կիրառելով ժամանակակից բոլոր մեթոդներն ու ձևերը: Անհրաժեշտ է

անցկացնել և իրականացնել ուսուցիչների փորձի ուսումնասիրում, լաբորատոր աշխատանքների կազմակերպում, ինքնուրույն աշխատանքի զարգացում, համակարգիչների օգտագործում, ծանոթություն ժամանակակից հոգեբանամանկավարժական գրականությանը, մեթոդական նորույթներին: Հանախակի անցկացնելփոխադարձ դասալսումներ՝ առաջավոր փորձի փոխանակման համար: Պետք է ներգրավել աշակերտներին ստեղծագործականաշխատանքներին, կազմակերպել լրացուցիչ աշխատանքներ թույլ աշակերտների հետ, անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրի նկատմամբ, առանձնահատուկ ուշադրություն դարձնել ներառական կրթության մեջ ընդգրկված աշակերտներին:

Անհրաժեշտ է պատրաստել դիդակտիկ նյութեր, պարագաներ, պատի թերթեր, ստենդեր, անցկացնել ուսուցիչների հաշվետվություններ կատարած աշխատանքի վերաբերյալ:

1.3 Ուսուցչի ներգրավածությունը հաստատության մասնագիտական մեթոդմիավորումների գործընթացին:

Վերջին շրջանում ավելի ու ավելի հաճախ են հնչում արտահայտություններ՝ կյանքի որակ, կրթության որակ, սոցիալական հաջողություն: Կրթության որակիբարելավումը ՀՀ կրթութական համակարգի արդիականացման հիմնական խնդիրներից է: Իհարկե, առանց նորարարական տեխնոլոգիաների, ժամանակակիցուսումնական միջոցների ներդրման, ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման, առաջադեմ մանկավարժական փորձի բացահայտման և տարածմանդրան հնարավոր չէ հասնել, ինչպես անհնար է հասնել առանց յուրաքանչյուր ուսուցչի պրոֆեսիոնալիզմի բարձրացման: Ուստի, կարող ենք հստակ նշել, որ առարկայական մեթոդական միավորումների գործառույթը դպրոցում ուղղված է հենց այդ նպատակին:

Կարող ենք վստահաբար արձանագրել, որ դպրոցի գործունեության դրական արդյունքները ուղիղ համեմատական են յուրաքանչյուր աշակերտի անհատական հաջողություններին, կրթական նվաճումներին, ուստի յուրաքանչյուր ուսուցիչ պետքէ մեծ ուշադրություն դարձնի իր անձի ինքնակատարելագործմանը,

ինքնակրթությանը, դասերին պատրաստ ներկայանալուն և արտադասարանական գործունեությանը: Որքան մեծ է ուսուցչի պատասխանատվության զգացումը, կատարելագործվելու, որպես նորորոր հանդես գալու ցանկությունը, այդքան բարձր է կրթության որակը:

Այս առումով անգնահատելի է մեթոդական միավորումների աշխատանքը դպրոցում: Այստեղ իրականացված բազմաբովանդակ գործառույթները օգնում են ուսուցչին գենեռացնել իր ողջ մարդկային ներուժը, աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար, գնալ նոր ու հետաքրքիր գաղափարների որոնման ճանապարհով, ինչի արդյունքում աշխատանքը դառնում է համակարգված ու արդյունավետ: Ուսումնական գործընթացը համակարգվում է, քանի որ մի նպատակի իրագործման համար աշխատում է մանկավարժների ամբողջ մի թիմ, բացառվում է ցանկացած անհատական շահ, բոլորը գործում են՝նպատակ ունենալով համակարգել ուսումնադաստիարակչական գործընթացն ու բարձրացնել կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների կրթության որակը:

Կրթության որակ հասկացությունը սերտորեն առնչվում է կրթության մատչելիությանը և, չնայած սրանք երկու տարբեր հասկացություններ են, այնուամենայնիվ փոխլրացնում են միմյանց: Եթե կրթության որակը հնարավոր չէ առանց կրթության մատչելիության, ապա մատչելիությունը իմաստազրկվում է առանց համապատասխան կրթական որակի ապահովման: Որակյալ կրթությունը միտված է ապագային և ենթադրում է ոչ միայն նախկինում առկա գիտելիքների ուսուցանում և յուրացում, այլև նոր գիտելիքների ստեղծում անհատապես կամկոլեկտիվ եղանակով: Գիտելիքաստեղծ գործունեությունը որակյալ կրթությանհիմքերից է, որը կարող է բերել գիտելիքահեն տնտեսության, ժողովրդավարական հասարակարգի զարգացման, կյանքի զարգացման նոր ուղիների ու մոդելների ստեղծման ու զարգացման: Ստացվում է, որ կրթության որակ ու մատչելիություն հասկացությունները խիստ համադրելի են, ուստի մեթոդական միավորման անդամ ուսուցիչները ևս պետք է իրենց գործունեության հիմքում դնեն մատչելիությունն ու հասանելիությունը:

Մեթոդական միավորումներն իրենց աշխատանքը պլանավորելիս պետք է հաշվի առնեն կրթության

առաջնային շահակիցների՝ սովորողների շահերը: Ստացվում է, որ սովորողը նույնպես որոշակի կերպով, թեկուզ անուղղակի մասնակցում են կրթական համակարգի այս կամ այն օղակի աշխատանքներին: Սովորողների մասնակցությունը կրթական գործընթացին ենթադրում է, որ նրանք պետք է դառնան այդ գործընթացի գործընկերային կողմ՝ իրենց դերերով, պատասխանատվությամբ ու իրավասության շրջանակով: Այս սկզբունքի համաձայնսովորողի ու ուսուցչի միջև պետք է գործի համագործակցություն, վստահություն, և հարգանք, քանի որ կրթողները իրենց ևս սովորողներ են և սովորողը կարող էաղբյուր հանդիսանալ կրթողի համար նոր գիտելիքների ձեռքբերման համար:

Աջակցող կրթական միջավայրը կրթական գործընթացի կարևորագույն կողմերից է, որտեղ պետք է գերիշխի փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքը, ինչն իր հերթին խթան է հանդիսանում ստեղծագործականության և ինքնուրույնության համար: Այն իր հերթին կարևորում է կոլեկտիվ ուսուցումը և ամրապնդում սովորողների միջև հարաբերությունները: Այս տեսանկյունից կարող ենք նկատել, որ սկսնակ ուսուցչին մեթոդական միավորման ներսում ևս կարող ենք

դիտարկել որպես «սովորող», ուստի գործընկերների կողմից պետք է ստեղծվի փոխօգնության, աջակցման միջավայր, այլ խոսքով՝ մեթոդական միավորման

նախագահն ու փորձառու անդամները պետք է առաջնորդվեն ժողովրդավարական և ոչ-խստական սկզբունքներով՝հարգելով բազմազանությունն ու հանդուրժողականությունը:

Եթե փորձենք վերլուծել ուսուցչի անհատական աշխատանքն ու ֆունկցիոնալ պարտականությունները մեթոդական միավորման ներսում, ապա պարզ է դառնում, որ ուսուցիչների զբաղվածությունն ավելանում է անհնար չափով: Այն գործառույթները, որոնք ուսուցիչն իրականացնում է միավորման ներսում, բացառապես նպաստում են վերջինիս մանկավարժական հմտությունների ձեռքբերմանն ու արդյունավետ գործունեություն իրականացնելուն: Ուսուցչի մասնակցությունը մեթոդական միավորմանը նպաստում է մասնագիտական վարպետության, մեթոդական կուլտուրայի, ստեղծագործական ներուժի բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ ուսուցիչը ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: Ուսուցչի առաջընթացի համար կարևոր է նաև,որ նա խորհրդակցի հաստատության առարկայական մեթոդմիավորման նախագահի հետ, ինչն էլ ուսումնասիրեցինք մեր հետազոտության ընթացքում: Բերենք մի քանի դիտարկումներ մեր ուսումնասիրությունից.

- Ուսուցիչը պետք է մեծագույն պատասխանատվությամբ ձգտի մասնագիտական զարգացման թե՛ անհատական, թե՛ գործընկերների հետ համատեղ աշխատանքում;
- Ուսուցիչը պետք է անվերապահորեն կատարի իր մասնագիտական պարտականությունների՝ ձգտելով համագործակցել այլ ուսուցիչների, դպրոցի խորհրդակցական մարմինների հետ;
- Ուսուցիչը պետք է պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ և շարունակ ձգտի ինքնակատարելագործման;

- Ուսուցիչը պետք է հետևողականորեն զբաղվի ինքնակրթությամբ, աշխատի իր որակավորման բարձրացման ուղղությամբ և որոնի աշխատանքի ավելի արդյունավետ մեթոդներ;
- Ուսումնական գործընթացի որակի բարելավման նպատակով ուսուցիչը պետք է անընդհատ կատարի մշտադիտարկում, ուսումնասիրի ոլորտի նորարարությունները;

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դպրոցում ուսուցիչների նախաձեռնությամբ հաճախակի կազմակերպել բաց քննարկումներ, որտեղ վերջիններս հնարավորություն կունենան արտահայտվել, բարձրաձայնել առկա հիմնախնդիրները, բանակցել:
- Մշակել արդյունավետ ռազմավարություն մեթոդական միավորման անդամների միջև աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, համագործակցային միջավայր ստեղծելու համար:
- Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր մեթոդական միավորումների առավել ակտիվ անդամների հաճախակի

խրախուսելու համար:

●Մեծացնել վերահսկողությունը սկսնակ ուսուցիչների աշխատանքի նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=114876 ՀՀ Կառավարության որոշում:
2. http://ipp.am/wp-content/uploads/2018/01/Reserch-on-Quality-of-education01.08.2017.pdf Կրթության որակի ընկալումները հանրակրթական համակարգում:
3. https://aspu.am/website/images/old/upload/file/Hayecakargh.pdf ՀՊՄՀ, Մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգ, Երևան,2014: